

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Ե Լ Ե Փ Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաւանդիւր բառին 2 կոպեկ:

Տ Ե Լ Ե Փ Օ Ն № 253.



Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՆԱԶԵԼԻ ԵՒ ԲԱԳԱԼ ՄԵԼԻԻՔ-ԵՅՆԱԹԵԱՆՅՆԵՐԸ յայտնում են իրանց խորին
շնորհակալութիւնը այն անձանց, որոնք թէ հեռագրով և թէ նամակներով յայտ-
նեցին իրանց ցաւակցութիւնը իրանց

Ա Ր Ս Ե Ն Ո Ր Դ Ո Ւ

վաղահաս մահուան առիթով՝ նրա վշտացած ծնողներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարելի է մարտնչել. Հեռագրիւնը.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթնամստեանական ցուցանալիս
թիֆլիսում. Նամակ բաղադր. Նամակ խմբագ-
րութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Վաւերագիր.
Նամակ Գերմանիայից. Հայերի մի նոր գաղթանակ.
Կրեւերի գրութիւնը. Հարկուրի ճառը. Արտաքին
լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ
Շվեյցարիայից:

ԿԱՐԵԼԻ Ե ՄԱՔԱՌԵԼ

Մեր գաւառական քաղաքներում ինքնա-
վարութիւն մտնելը առիթ է տալիս մեր
թղթակիցներին տրեց և նորից խօսել
ընտրութիւնների և ընտրողների պարտա-
ւորութիւնների մասին, յիշեցնել այն
մեծ պատասխանատուութիւնը, որ ծանրա-
նում է ինքնավարութեան պաշտօնա-
ւարներին վրա: Թղթակիցների գրութեանը
չհամարեա մի և նոյն ժամանակագրու-
թիւնն ունեն և ընդհանուր բնութագրութիւն
են կրում: ասկայն նրանք իրական պա-
հանջների և գաւառական օրվայ շարքի
արտայայտութիւններ են, և այդ պատ-
ճառով արժանի են կատարեալ ուշադրու-
թեան:

Նոր բացվող ինքնավարութեան շուրջը
արդէն սկսում են պտտել զանազան ան-
պատրաստ և անբարեխիղճ անձնաւորու-
թիւններ, որոնք աշխատում են իրանց
ձեռքը գցել քաղաքի կառավարութեան
դէկը, ազդեցութիւն ձեռք բերել և իրանց
նեղ շահերը ու զիտումները աշխուժեցնել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԵՎ ԵՅՆԱԹԵԱՆՅՆ

Ժ ը Ն Ե Վ, 20 սեպտեմբերի

Այս տարի ժընեւ քաղաքն այն առանձնա-
շնորհութիւնն ունեցաւ, որ իր պարիսպների
մէջ ընդունեց մի քանի թէ ազգային և թէ միջ-
ազգային կոնգրեսներ և Ժողովներ: Դրանց մէջ
ամենից կարեւոր և նշանաւորը՝ զառաւանդական
անթրոպոլոգիայի միջազգային IV-րդ կոնգրեսն
էր: (IV Congres international d'anthropologie
criminelle): Աշխարհի ամեն կողմերից, նոյն իսկ
Եւրոպայից, զանազան գիտնականներ եկել էին
մասնակցելու այդ կոնգրեսին, որի անդամների
թիւը 300-ից անցնում էր: Գիտնականների մէջ
առաջնակարգ տեղ էին զբաղեցնում իտալական զըն-
րոյցի ներկայացուցիչները—հռչակաւոր պրոֆէսոր
Լօմբոզօ, իտալական պարլամենտի պատգամաւոր
պրոֆէսոր Ֆէրրի և պրոֆէսոր Մօրբօ: Ռուսաս-
տանի կողմից ներկայացուցիչներ էին—Բեխտե-
րեւ և Ֆոյնիցիլի պրոֆէսորները, տիպին Տար-
նովսկայա և սենատոր Զալյեյսկի:

Կոնգրեսը բացվեց օգոստոսի 24-ին չիլյացարա-
կան դահլանցութեան նախագահ Լաչնայի և
Ժընեւի քաղաքի ու կանտոնի նախագահների ներ-
կայութեամբ ու ողջոյններով: Կոնգրեսի նախա-
գահ ընտրվեց զօգտօր Լաչնայ, որը համառոտ
կերպով զեկուցեց Պարիզում, Հռօմում և

առաջ տանել: Նոր հաստատութիւնը, որ
պէտք է ոգևորէր մարդկանց մի առանձին
աշխույժով և եռանդով զործելու, անար-
ժան միջոցութեան մի ասպարէզ է դառ-
նում: Խնամքութիւն, Թայֆայութիւն, մա-
նաւոր հաշիւներ զեկաւարում են մտքե-
րը և ազդում ընտրողական գործի վրա:
Սակայն յուսահատական չէ ամենեւին
գաւառական ինքնավարութեան վիճակը:
Ընտրողներից և նրանց ջուղարկութիւնից
է կախված այս կամ այն անձի պաշտօնա-
ւար լինելը: Իսկ եթէ ընտրողները չեն
կամենում օգտվել իրանց իրաւունքից, դա
նշանակում է որ մի և նոյն ժամանակ
նրանք չեն հասկանում իրանց պարտաւո-
րութիւնը և զիտումները իրանք ի-
րանց յանձնում են անարժան և ան-
բարեխիղճ գործողներին ձեռքը: Եւ քա-
ղաքային ինքնավարութիւնը, հիմնված
լինելով ընտրողական սկզբունքի վրա, մի
անմեղքեան է անմատչելի հաստատու-
թիւն չէ, նրա պաշտօնավարները անպա-
տասխանատու և ինքնակամ անձնաւորու-
թիւններ չեն, որ անկարելի լինի նրանց
քննադատել, պատասխանատուութեան են-
թարկել և զսպել:

Ի հարկէ, այդպէս անհրաժեշտ է, որ
ընտրողների մեծամասնութիւնը լաւ հաս-
կացած լինի իր իրաւունքները և պարտա-
ւորութիւնները, զիտակցեալ վերաբերվի
ընտրողական գործին և համոզվի, որ ի-
րանցից է կախված քաղաքի բարեխիղճ և
գործունէնայ պաշտօնավարների տարը: Այն
ժամանակ ոչ մի սահմանափակ խումբ իր
մասնաւոր զիտումներով և հաշիւներով չէ

Բուդապէստում կայացած նախկին կոնգրեսների
արդիւնքների մասին և ապա մի ներքուստ
ճառ խօսեց վախճանված Կարլ Ֆոխտի, Մալե-
չօտի և անթրոպոլոգիայի կողմնակից պրո-
ֆէսորների յիշատակին: Երկուշաբթի, օգոստո-
սի 25-ին, ժամը 2-ին, կայացաւ կոնգրեսի ա-
ռաջին նիստը, որ պրոֆէսոր Լօմբոզօ կար-
գաց իր զեկուցագիրը այն արդիւնքների մասին,
որ անթրոպոլոգիան և սոցիոլոգիան 1890 թվից
սկսած ձեռք են բերել ոճրագործների վերաբեր-
մամբ: Լօմբոզօի կարծիքով, իւրաքանչիւր ոճ-
րագործ ներկայացնում է նորմալ տիպերի մի
քանի անատոմիական շեղումներ և այդ շեղում-
ների մէջ, որոնք լինում են կամ ժառանգական
կամ աստվածական (պատական կամ նախապա-
սկան) նա գտնում է զլիակաւոր և համարեա
միակ պատճառը, որ զընդուն է մարդուն ոճրա-
գործութիւն անել:

Լօմբոզօի այդ կարծիքին հակաձայնեցին Գալե-
ման, Ֆորէլ և Նեկկէ պրոֆէսորները. նրանք
յայտնեցին, թէ իտալացի գիտնականից ցոյց տը-
ւած անատոմիական նշանները չափ անզուտ այն-
պիսի մարդկանց մօտ են գտնվում, որոնք եր-
բէր ոճրագործութիւն չեն արել, և, հետևաբար,
չէ կարելի, հիմնվելով միայն այդ արտաքին նը-
շանների վրա, բացատրել ոճրագործութեան
պատճառը: Վեր ուղեղների խորքում պէտք է
աշխատենք գտնել ոճրագործութեան պատճառ-
ները: Երեկան ոճրագործ չէ ծնվում, այլ սօ-
ցիալական պայմանները, ապականված կրթու-
թիւնը, վատ օրինակներն են, որ զլիակաւորապէս
զըզում են մարդուն ոճրագործութիւն անելու:

կարող աշխուժիւն ունենալ և կը մահա-
նայ առողջ և անխնայ քննադատութեան
սուսը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ

(Ուսաց զործակալութեան)

Լ օ Ն Դ Օ Ն, 3 սեպտեմբերի: Գարնիցածնում
ֆինանսների մինիստր Հիքս-Բիչ մէկ ճառ ար-
տասանեց, որի մէջ ասեց. «Մեր աշխարհի առջի
գործերի զործիւնը Թիւրքիայում այն տեղը
հասաւ, որ կարելի էր կարծել թէ օսմանեան
կայսրութեան վերջին օրակներն են հասնում:
Խոստումներն ժամանակն անցաւ, հասաւ ժա-
մանակը, երբ պէտք է պնդել, որ մաքնվեն ըն-
թորմներ նրանց իրագործման պատշաճաւոր և
բաշխարարութիւններով: Բայց ինչ ձեռք
բերել այդ երաշխարարութիւնները: Առանձնա-
ցած գործել Անգլիան ամենեւին չէ կարող: Ներ-
կայ գրութեան զլիակաւոր կէտը Ռուսաստանի
վիճին է՝ Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի
հետ համաձայնութեամբ statu-quo պահպանել
Թիւրքիայում: Պատճառը, թէ ինչու պետութիւն-
ները ցանկանում են այդ statu-quo-ն, պայմա-
նաւորում է եւրոպական խաղաղութիւնը պաշ-
տանքը ցանկութեամբ: Մենք պէտք է միա-
բան գործենք ուրիշ պետութիւնների հետ
և կը վերջենք այդպէս վարվել: Մեր կա-
ռավարութեան ձեռք առած միջոցները ճշգու-
թեամբ չեն կարող բացատրել, բայց անշահա-
ւեր և վատահոգով միտքան գործողութիւնները
ուրիշ պետութիւնների հետ միասին աւելի
սպող վախճանի կը հասցնեն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐՆԱՏԵՍԵԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վաղը, կիրակի, ամիս 6-ին, առաւօտեան 12
ժամին, կովկասեան Գիւղատեստեանական ընկերու-
թեան չիւռութեան մէջ տեղի կունենայ կաթ-
նա տնտեսական ցուցահանգէսի բա-
ցումը: Յուշահանգէսի բերված առարկաները
զետեղված են երեք սենեակների և երկու ա-
նա այն առարկութիւնները, որ արին Ֆորէլ,
Գալեման և Նեկկէ պրոֆէսորները: Մի այլ գիտ-
նական Գիւղար այն կարծիքը յայտնեց, թէ ար-
դարև միջավայրից շատ բան է կախված. արեւ-
ցող ծնողների գաւազները ծնվում են ոճրա-
գործ լինելու արամադրութեամբ, իսկ վատ
կրթութիւնը, գէշ օրինակները և անբարեխիղ-
նացուցիչ պայմանները դարձացնում են այս
սաղմը:

Պատասխանելով այդ առարկութիւններին,
Լօմբոզօ նկատեց, որ ճշմարիտ, իր ցոյց տը-
ւած նշանները երբեմն այնպիսի մարդկանց
մօտ են գտնվում, որոնք երբեք ոճրագործու-
թիւն չեն արել, և եթէ ցանկանում էք,—ասեց
նա,—սպաւոր մի նշան էլ ես ունեմ իմ ձեռքի
մէջ (նա ցոյց է տալիս ձեռքը), բայց ես ոճրա-
գործ ծնված չեմ: Ինչպէս որ մի հատ ակնբոլով
անկարելի է կաղմել ամբողջ երաժշտութիւն,
նոյնպէս և իմ ասածը մի հատ նշանի վրա չէ հիմն-
ված, այլ ոճրագործ ծնվածները կրում են անու-
ստիական բոլոր շեղումների նշանները:

Այս պրոֆէսոր Ֆէրրի մի փայլուն ճառով
յայտնում է, որ թէ ինքը և թէ իտալական զըն-
րոյց ամենեւին այն կարծիքի չեն, թէ ձայնատա-
ղի բերմամբ ոճրագործ ծնված տիպերը լոյս
անատոմիական նշանների արգիւնք են: Ոչ, կան
և ուրիշ բաղադրիչ, գործը պատճառներ, որոնք
նոյնպէս ազդեցութիւն են գործում. բացի անա-
տոմիական պատճառներից, նաև բիոլոգիա-
կան և հոգեբանական երեւոյթների ազդե-
ցութիւնները աշխարհի զորիշ պատճառներ կա-
րող են լինել ոճրագործութիւն անելու համար:

առանձին պալիտիկոնների մէջ: Այդ պալիտիկոնները
պատկանում են կաթնատեստեան Զաղինեանին
և Մէլիք-Բախտամեանին:

Յուշահանգէս են ուղարկել իրանց արդինա-
գործութեան առարկաները համարեա բոլոր այն
կաթնատեստեանները, որոնք եւրոպական կատա-
րեալագործված իւր և պանիր են պատրաստում
մեզանում: Այդպէս են Ալեքսանդրաշիֆի, Կու-
չենբախի, Նիդիզի, Ամետի, Գասաւի, Զա-
ղինեանի, Կեղեւու, Լինգարտ և Մաթէոսեան
ընկերութեան, Մէլիք-Բախտամեանի, հիւսիսա-
յին Կովկասի տեստեանական ընկերութեան, Կա-
րաւի, Տօմիլիի արդիւնքները: Տեղական տե-
սակի իւր և պանիրը ցոյց է դրված քիչ քանա-
կութեամբ, սակայն զլիակաւոր տեսակները կան:

Գիւղատեստեանական ընկերութիւնը իր կողմից
հանդէս է դրել կաթնատեստեանական գործիքների
և մեքենաների իր ժողովածուն, որ նա կաղմել
է տարիների ընթացքում: Թիֆլիսի քաղաքային
լաբորատորիան ցոյց է հանել կաթ և իւր հե-
տադոտելու իր գործիքները, զանազան ար-
դիւնքների նմուշներ և մի քանի տարվայ անու-
ղիւնք: Երկրագործութեան մինիստրութիւնը
ներկայացրել է արտատեսակների ուսումնասիրու-
թեան և բարեկարգութեան վերաբերեալ պլան-
ներ և դրական աշխատանքներ:

Յուշահանգէսում ամենայն օր ցոյց են տրվելու
զանազան տեսակ պանիր և իւր պատրաստելու
եղանակները: Թէ ցոյց դրված արդիւնքների
և թէ նրանց պատրաստութեան վերաբերեալ
բացատրութիւնների համար նշանակված են յա-
տուկ անձեր և պէտք է ժամանակ առժամա-
նակ կարգադրեն դասախօսութիւններ:

Երեկոյնը պէտք է նուիրված լինեն նիստե-
րի, որոնց պէտք է մասնակցեն կաթնատեստեա-
նական և տաւարապահութեան խնդիրներով ըզ-
բաղվող բոլոր մարդիկ:

Յուշահանգէսի արդիւնքների որակութեան և
զննատեստեան, նիստերի պարապմունքների և
այլ մանրամասնութիւնների մասին կը տանը
մեր ընթերցողներին տեղեկութիւններ:

Եթէ չոճրագործ—ծնվածը բաղը ունենայ ծըն-
վելու և պարելու բարոյական չրճանում, նա կը
մնայ և կը մեռնի բարոյական մարդ, հետևաբար
անատոմիական արտաքին երեւոյթները միայնակ
անգոր են մէկին ոճրագործ լինելու, թէև ար-
տաքին արտայայտութիւնները նոյնպէս մեծ դեր
են խաղում այն տեսակէտից, որ անատոմիա-
կան նշաններով մի մարդ ընկնելով փաշտած
չրճանի կամ թշուառութեան մէջ, աւելի շուտ
ոճրագործութիւն կանի, քան թէ մի մարդ ա-
ռանց այդ նշանների, նոյն պայմաններին և ըը-
ջանի մէջ: Ուրեմն իտալական զընրոյցի կողմից
ընդունված տիպերը լոյս անատոմիական չեն,
այլ և սոցիոլոգիական: Պրոֆէսոր Գալեման պա-
տասխանում է, որ ընդունելով սոցիոլոգիական
պատճառները, իտալական զընրոյցը լայնացրեց
իր հայեացքը հորիզոնը և ինքը պաշտպան ու
կուսակից է այդ տեսակ վարդապետութեան:

Երբոր օրը, օգոստոսի 26-ին, կոնգրեսը զբաղ-
վեց նախ բիոլոգիական ոճրագործութեան հար-
ցով, ապա տիպին Տարնովսկայա կարգաց իր
աշխատանքը Ռուսաստանի կանանց ոճրագործու-
թեան մասին: Հասարակութեան մէջ, ասաց
տիպինը, կիրը չունի նոյն իրաւունքները, ինչ որ
տղամարդը. նա յաճախ հպատակվում է իր ա-
մաւուռ հեղինակութեան. արդարութիւն է ար-
դեօր, որ ոճրագործ կիրը ենթարկվի նոյն պա-
տիժներին, ինչ որ տղամարդը:

Միւս զեկուցումներից իր վրա առանձին ուշադ-
րութիւն դարձրեց պրոֆէսոր Գալեմանի «Այլա-
սեռութեան և յանցանքութեան» (Dégénérescence
et criminalite) աշխատութիւնը, որի մէջ նա

Մ. Կաթեան

նի մասին, հերքում էր այն կարծիքը, թէ կառավարութիւնը աջակցում է հայկական ազգայնականութեանը: Թէպէտ և Անգլիան իրաւունք ունի պաշտպանութիւն ցոյց տալ հայերի բոլոր արդարացի ձգտումներին, բայց Հայաստանի համար պատերազմ չի սկսի: Անգլիայի շահերն են խաղաղութիւն և բրիտանական հպատակների բարօրութիւն և եւրոպական խաղաղութիւն: Անգլիայի առաջին պարտքն է, չարոնակեց հոեաօրը, ազնուութիւն եւրոպական կոնցրէսի վերաբերմամբ: Պետութիւնները պէտք է համոզվեն, որ մեր հպատակները անշահաւէր են: Զարգեցողութիւնները զէպի Ռուսաստանը սրտագին և բարեկամական են: Անգլիայի դրոշմներ չեն ղեկավարում կառավարութեանը իր վարմունքի մէջ Ռուսաստանի վերաբերութեամբ: Անգլիան չահաւէր ձգտումներով չէ ղեկավարում, նրա մշտական հպատակը խաղաղութիւնն է:

Պիչերը, հոկտեմբերի 2-ին, Թէոֆոսիայի մօտ, ուսուց ընկերութեան «Օլգա» չորեքուկ ընդհարման «Дѣлать апостоловъ» նաւի հետ, խորտակելով վերջինին: Նաւատիրները ազատված են: «Օլգա» չորեքուկը վնասված է:

«Մշակի» այս համարը բաղկացած է թերթ ու կէսերից:

Մեզ խնդրում են յայտնել, որ կիրակի, հոկտեմբերի 5-ին, քաղաքի մի քանի մասերում նշանակված են ժողովրդական ձրի դասախօսութիւններ: Ավճառայի նախկին ճաշարանի շինութեան մէջ Վ. Լուկինսկի կը կարդայ դասախօսութիւն «Երկրի մասին»: Վերջապէս գիշերային ապաստարանում Պոկտաիով կը կարդայ Տօլստոյի «Князь Серебряный», իսկ երկաթուղու արհեստանոցներում Բազդրին կը կարդայ Պուշկինի «Капитанская дочка»:

Մի քանի ժամանակ առաջ Թիֆլիսի դատարանը բերել էին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցը բորոտութեամբ հիւանդ մի մարդ: Այդ սարսափելի հիւանդութիւնը, որը վաղուց չէր տեսնված Թիֆլիսի նահանգում, ցոյց է տալիս, որ նա բերված է ուրիշ տեղերից և, հետեաբար, անմիջապէս ազդու միջոցներ պէտք է ձեռք առնել, որ նա չը տարածվի և չը վարակի ուրիշներին: Հոկտեմբերի 2-ին, Կովկասեան բժշկական ընկերութիւնը մի ամբողջ նիստ նուիրեց այդ հարցին, և Միքայէլեան հիւանդանոցի օրդինատոր դոկտօր Մարկ Ժողովի առաջ քննեց բոլորտին: Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել այդ սարսափելի հիւանդութեան տարածման առաջին առնելու և մանաւանդ թող չը տալու, որ նա իր օջախից Պարսկաստանից կարողանայ մուտք գործել Կովկաս: Այդ նպատակով ընտրվեց մի յանձնաժողով՝ Մարկ Ժողովի մօտ գտնուելով, Լուկինսկի, Մարի, Սախարով, Լօրիս Մէլերով և խառնաձուլ:

Խնչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, երկրագործութեան և պետական կառավարութեան միջնորդութիւնը, մետաքսագործութիւնը զարգացնելու նպատակով, ծրագրում է մի քանի գործնական դպրոցներ բանալ Անդրկովկասի զանազան տեղերում: Դամասկոմ պէտք է բացվի մի դպրոց ոտաւանակ-վարպետների և ներկարարների համար, որտեղ դասատուութիւնը գործնական մեթոդով պէտք է լինի. Օշուրպէթի գաւառի Լինչիւով, Բուխարայի գաւառի Խովի գիւղերում, Թէրափում, Եւզում և Դամասկոմ պէտք է բացվեն ձեռագործութեան դպրոցներ աղբիւրանց համար: Նույն ժողաբային դպրոցին կից մի բաժանմունք պէտք է բացվի մետաքսեայ զանազան հիւսուածքներ պատրաստող վարպետների համար: Կովկասեան չերամպագահական կայարանում պէտք է հաստատվի տնայնագործական մետաքսեայ ձեռագործների մուլէյի, իսկ իրական այն դպրոցներում, որտեղ առհասարակ դաս են տալիս ձեռագործ, պէտք է սովորեցնեն աշակերտութիւններին մետաքսեայ կրօնականներ և ուրիշ ձեռագործներ պատրաստելու:

Հոկտեմբերի 3-ին Թիֆլիսում կայացաւ Թիֆլիսի նահանգի ազնուականների արտակարգ ժո-

ղովը՝ նահանգական ազնուականութեան պարագլուխ Իշխան Բաղդասարի Մուխրանսկու նախագահութեամբ: Ժողովը զբաղվեց մինչև Կախեթ երկաթուղու գիծ անցկացնելու հարցով և որոշեց՝ սահմանված կարգով միջնորդութիւն յարուցանել Բաղդասարին անունով, որ Կախեթ երկաթուղու գիծը անցկացվի դամաքանի հայւհով, իսկ եթէ այդ միջնորդութիւնը որ և է պատճառով անկարելի լինի աջակցելու, այն ժամանակ խնդրել, որ ազնուականութեանը տրվի այդ երկաթուղու գիծը շինելու կոնցէսսիա:

Ներկայ ակադէմիական տարվայ սկզբից, միայն Կազանի համալսարանում, ժողովրդական լուստարութեան միջնորդի թոյլտուութեամբ, ուսանող են ընդունվել 25 սեմինարիստներ, առանց հասունութեան վկայագիր ներկայացնելու:

Բազուի մօտ Մարդաբան գիւղում բացվող այգեգործական դպրոցը մտնելու համար, «Kac-nix» լրագրի ասելով, խնդրել են տուել մինչև 40 երեխաներ: Գաղտնի կայ մօտ 50 հոգուտեղ: Աշակերտների պահելու ծախսը իր վրա է վերցրել Թադիսկ: Հրաւիրված են երեք մասնագէտ ուսուցիչներ: Ուսումը պէտք է սկսվի ներկայ հոկտեմբերի ամսի վերջին:

ԷՋՄԱՄԱՆՆԻՅԵ մեզ գրում են. «Սեպտեմբերի 29-ին, վարդապետայի տօնի օրը, կատարվեց Վեհախաւ Կաթողիկոսի օծման տարեգարծը: Ուխտաւորների թիւը այս տարի չափ քիչ էր, այնպէս որ միայն յիշակայ մի քանի գիւղացիներն էին եկել սպիւնով:

Նույն գաւառի ԿՈՒՏԿԱՇԵՆ գիւղից մեզ հաղորդում են հետեւյալ մանրամասնութիւնները: Նույն դպրոցների աւագ ուսուցիչ Աստուածատու Ոսկանեանի սպանութեան մասին: «Մի կտոր հողի պատճառով վեճ է ծագում Ոսկանեանի և իր հօրեղբոր որդիների մէջ և Ոսկանեան որդու է դիմել դատարանին ու այդ մասին յայտնում է իր հօրեղբոր որդիներին: Սեպտեմբերի 11-ին, երբ նա Նիժնի գնում էր քաղաք գնալու, զինուորական հարուածներով տապալում է գետին: Մի սայլապան, անցնելիս, գտնում է Ոսկանեանին արհեստավորան ընկած գետին վրա, մօտենում է, հարցնել է տալիս և հազիւ կարողանում է իմանալ սպանողի անունը, որ լինում է հօրեղբոր որդիներից մէկը: Ոսկանեան այդտեղ վնաս է հոգին և սայլապանը դիմել վեր առնելով բերում է Նիժնի Զաւալին այն է, որ նրա մահից յետոյ, դպրոցների հազարաւորութեան նախագահ Սիմէոն քահանայ Տէր-Պողոսեան, թող չը տալով որ գոնէ վայրէջան օրերն անցնեն, ստիպում է Ոսկանեանի արարւն դուրս գալ դպրոցի սենեակներից, որտեղ հանգուցեալը ապրում էր, իբրեւ աւագ ուսուցիչ: Այդ անմարդասէր վարմունքը չափաւ տալաւորութիւն թողեց»:

ԷՋՄԱՄԱՆՆԻՅԵ մեզ հաղորդում են. «Սեպտեմբերի 28-ին Գէորգեան ձեռնարանի տարեգարծն էր: Հանդէսին ներկայ էին Վարդապետայի հայ հասարակութեան մի մասը, մի քանի վարդապետներ և մի եպիսկոպոս Տեոֆիլ Կոստանեան կարդաց ձեռնարանի 1895—96 ուսումնարանական տարվայ տեղեկագիրը, որից յետոյ ուսուցիչներէն մէկը ամբողջ մի ժամ կարդաց մի ձանձրալի ճառ «Մեարդի մասին»: Երեկոյան ձեռնարանում հրաւիրութիւն կար»:

ԷՋՄԱՄԱՆՆԻՅԵ մեզ հաղորդում են հետեւյալ բնորոշ լուրը. «Մօտ մի ամիս է, ինչ էլ միտածին է եկել խորէն եպիսկոպոս Ստեփանէ: Բայց մինչև այսօր չըրոշվեց, թէ ինչ պաշտօն պէտք է տրվի սրբազանին: Դատ քան երբ լսում, բայց և ոչ մէկին չենք հաւատում: Ասում են, որ իբր թէ մտադրութիւն կայ նորից նրան զինապետ կարգել և սինօզի անդամ առաջարկել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօնդոնից «НОВОСТИ» լրագրին հեռագրում են, որ կարդնալ Վօդան հրաժարվեց մասնակցել հայերի օգտին կազմվող միութնին:

Վիեննայից հեռագրում են. «Գլուխով-վաշան ասեց «Local-Anzeiger» լրագրի թղթակցին, թէ Թիւրքիայի գլխաւոր ղեկավարութիւնը փողի պահպանութիւնն է և թէ ընթացիկ կարող են իրազեկվել միայն մի պայմանով, եթէ պետութիւնները զբաղական նպատակը տան Թիւրքիային և իրանց ձեռքը կանոնն նրա փինանսների կոնտրօլը»:

Կ. Պօլսից հեռագրում են, սեպտեմբերի 23-ից (հոկտեմբերի 5), որ հօլանդական դեսպանը այցելեց մեծ վիզիւրին: Նոյնպիսի այցելութիւն արեց նրան հայկաթօլիկների պատրիարք Ազարեան: Սուլթանը Ազարեանի հետ խօսակցութեան ժամանակ յայտնեց իր բարեհաճութիւնը զէպի հայկաթօլիկները, որոնք, սուլթանի խօսքով, միշտ խաղաղութիւն են ցանկանում, հակառակ իրանց ուղղափառ եղբայրներին: Սրանից յետոյ հայկաթօլիկները կանոնաւոր իրանց «կաթօլիկ-օսմանցիներ»:

Սեպտեմբերի 28-ին, Էմպիրալ-Թատր, Empire-Palace-Theatre ժողովում, ուր ներկայ էին մօտ 4000 մարդիկ, Բօլշեւի ճառ արտասանեց, որը սկսեց ասելով, թէ խօսում է յանուն հայրենիքի շահերի, որոնց ինքն չէ կարող զոհ բերել անձնական փառասիրութեանը կամ անձնական ցանկութիւններին: Մատնանք անելով ապա կուսակցութեան ղեկավարութիւնից իր հրաժարվելու շարժառիթները, Բօլշեւի յայտնեց, որ իր ձառի մէջ չի չօշափի ներքին հարցերը:

Անցնելով հայոց հարցին, Բօլշեւի յայտնեց, որ ինքն իր պարտաւորութիւնն է համարում այդ կողմից ամեն տեսակ գործակցութիւն ցոյց ապա կատարելութեանը, և ասում է, որ արտաքին քաղաքականութեան շրջանում ինքն երբէք կուսակցական սկզբունքներ չէ դաւանել: Թիւրքիայի արհեստագործների հարցը չափ աւելի կարեւոր է, քան թէ կարծում են: Խօսքը իսկական արեւելեան հարցի մասին է, որը վաղուց արդէն ծանրանում է Եւրոպայի վրա, այդ պատճառով մանաւանդ միջոցները անօգուտ են:

Ապա հետօրը քննեց առաջարկված զանազան միջոցները, ինչպէս, օրինակ, սուլթանի գահընկէցութիւնը, ցոյց տուեց զրանց անիրազործելի լինելը և յայտնեց, որ հարկաւոր է բոլոր առաջարկութիւնները խնամքով կշռել, նախ քան կառավարութիւնից պահանջել նրանց իրազեկումը: Ռուսաստանի հետ բարեկամաբար հարցի առիթով Բօլշեւի յիշեցրեց ազատամիտ կառավարութեան ձեռքով Պառիկի պայմանագիրը կապելու մասին և յոյս յայտնեց, որ կը գտնվի միջոց Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնելու համար: Ինչ վերաբերում է այն շարժառիթներին, որ զորեցին իրան հրաժարվել կուսակցութեան ղեկավարութիւնից, Բօլշեւի յայտնեց, թէ ինքն չէ կարող համաձայնվել Գաղստօնի առաջարկութիւնների հետ, որը իր հրաժարականի անուղղակի պատճառն է: Եթէ անգլիական դեսպանը յետ կը կանչվի Կ. Պօլսից, Անգլիան իր ներկայացուցիչը չի ունենայ եւրոպական կոնցրէսում: Այդպիսի քայլը պատերազմի պատճառ կը դառնար: Բօլշեւի չէ կարծում, որ Անգլիայի պատիւը կապված է Կիւրոսի պայմանագրի հետ, որովհետեւ սուլթանը չը կատարեց իր սեփական պարտականութիւնները: Վերջաբանութեան մէջ Բօլշեւի ասեց, թէ ինքն մինչև վերջին ծայր կը դիմադրի Անգլիայի անկախ միջամտութեանը Արեւելքում, որովհետեւ դա կարող է պատերազմի դուրը հասցնել նրան:

Իր ձառի մէջ Բօլշեւի չօշափեց Կիւրոսի հարցը և ասեց, որ Կիւրոսը Թիւրքիային վերադարձնելը անհնարին է, եթէ այդ քանը չընդունվի իբրեւ էժան փրկանք եւրոպական կոնցրէսի համար: Ինքն, Բօլշեւի, բողոքում էր այն քաղաքականութեան դէմ, որը կարող է եւրոպական պատերազմ և հայերի նոր կոտորած առաջացնել: Բրիտանական պետական մարդու նպատակը պէտք է լինի եւրոպական կոնցրէսի պաշտպանութիւնը, յօգուտ բրիտանական քաղաքականութեան: Ազատամիտ կուսակցութեան ղեկավարի դրութիւնը անկարելի է առանց եռանդոտ աջակցութեան. բնորոշութիւնների ժամանակեց, իր հրաժարականը ղեկավարի պաշտօնից զանազան էր իր՝ Բօլշեւի, ընկերների ձեռքում, և պէտք է իրազեկվէր, երբ դա պահանջում է կուսակցութեան միութիւնը: Դրա-

նից յետոյ կայացաւ որոշում, որ Բօլշեւի կրկին անգամ խորհի իր հրաժարականի մասին:

Կ. Պօլսի անգլիական դիւլոմատական շրջաններում լուր տարածվեց, թէ Ռուսաստանը և Անգլիան մշակել են Թիւրքիայի համար ընթացիկների մի նախագիծ, որ և ընդունվել է պետութիւններէ: Այդ նախագիծը մօտաւորապէս հետեւան է. «Բօսֆօր և Գարդանեւը բացվում են առեւտրական և զինւորական նաւերի ազատ երթնելութեան համար: Վերջիններից կը վերցվի միայն նոր տուրք՝ վարդապետին: Սուլթանի գերագոյն իրաւունքները անձեռնմխելի են մնում, բայց նրա կարգադրութիւնների համար կը գրծագրվի մի յայտնի սահման, և եւրոպական պետութիւնները կը վայելեն արտօնութիւն՝ աղղկելու մեծ վիզիւր և վայրերը բնորոշ ժամանակ: Պարտքերի վճարումը կանոնաւորվում է մաքսային գործը կերպարանափոխվում է: Թիւրքիային հնարաւորութիւն տալու համար իրազեկել այդ ընթացիկները, նրա կառավարութիւնը կը ստանայ 15,000,000 լիւրա»:

Լրագիրներում, ամսագիրներում, առանձին բրօշուրներով բազմաթիւ նախագիծեր են առաջարկվում արեւելեան հարցը լուծելու համար: Ռուսադրութեան արժանի է, ասում են ուսուցիչները, «Progressive Review» ամսագրի յօդուածը: Բօլշեւի հեղինակը սկզբում պատմական տեսութիւն է անում: Թիւրքերը ներս խուժեցին Եւրոպա այն ժամանակ, երբ արեւմտեան եւրոպական պետութիւնները զբաղված էին պատերազմներով: Այն ժամանակից Բօսֆօրի ափերում ամուր արմատ դրեց մի խոց, որի թոյնը տարածվեց Եւրոպայի բոլոր երաններով: Քաղաքակրթութեան, բրիտանիկութեան, միջադպիքի յարաբերութիւնները, բոլորը պղծեց այդ խոցը: «Եւրոպան» թիւրքերին ներս թողնելու այդ ճակատագրական սխալի համար վճարեց միլիոնաւոր փողեր և տուեց մարդկային զոհեր: Դրան դէմ մղված մի շարք պատերազմների ժամանակ: Աւելի էժան կը լինէր, ասելի արդարացի կը լինէր, եթէ բոլոր աղղերը առաջուց միասնային և միացած ոյժերով արտաքին կողմից նուաճողին ջէ որ հինգերորդ դարում միացան հօմալայցիները, գալլերը, գոտները՝ հուններին ջարդելու համար: Այժմ Եւրոպան վրէժնալից չէ ուղղում լինել, նա ոչինչ չունի: Դրան մահմետական հպատակների դէմ, որոնք, իսկապէս, նոյնքան են տանջվում, որքան և քրիստոնեաները: Կուլտուրական աղղերը ցանկանում են միայն վարչութեան այն սխալները, որոնք, որ առաջացրել է մի շարք սարսափներ, նրանք կամենում են արմատաւոր անել այն խոցը, որ գոյութիւն ունի միայն հարեանների նախանձի շնորհիւ: Թիւրքիան այժմ այնքան թոյլ է, որ նա ոչ միայն չէ կարող դիմադրել պետութիւնների միացեալ ոյժերին, այլ մինչև անգամ մէկ պետութեան ոյժին: Նա թուլացաւ 1791, 1827, 1829 և 1878 թիւերի մի շարք պատերազմների պատճառով: Այժմ Թիւրքիան բոլոր պետութիւնների խնամակալութեան տակ է: Ինչու նրանք իրանց ներգործական աղղեղութիւնը չը ցոյց տուին վերջին տարիների սարսափելի անցքերի ժամանակ: Պատասխանը չափ կարճ է, եւրոպական կոնցրէս ալ ևս գոյութիւն չունի: Վերջին 25 տարիների ընթացքում պետութիւնները, չեն պատերազմել միմեանց հետ, բայց երբէք նախանձը և տուրքութիւնը նրանց մէջ այնքան զօրեղ չէ եղել, ինչպէս այժմ: Եթէ Անգլիայի նախանձը չը լինէր, Ռուսաստանը 1878 թիւին կը լուծէր արեւելեան հարցը»:

Վիեննայից «НОВОСТИ» լրագրին հեռագրում են, թէ Կ. Պօլսի դեսպանները պահանջում են Բ. Գալիցի՝ ընթացիկների մի յանձնաժողով նշանակել և ժամդարմերիւս ու դատաստանական վարչութիւնը կերպարանափոխել:

Լօնդոնից հեռագրում են, որ լօրդ Բօլշեւի ցանկանում է, որ իր յաջորդ ընտրվի Ասկլայդ:

«Daily News» լրագիրը գովում է Բօլշեւի ձառը և սինդում է՝ երկրորդ անգամ ընտրել նրան ազատամիտ կուսակցութեան ղեկավար: «Daily Chronicle» յարձակվում է Բօլշեւի վրա և ասում է, թէ նա արժանացաւ ուղղմանի

Հնորակալութեանը: Անդրկական լրագրիչները տարածած այն լուրի առիթով, որ իբր թէ Սե Ժովի ուսանող հաւատարմութեան ունի անցնել Բոսֆորի միջով, «Nord» լրագրիչն աւսում է. «Կայսերական կարգիւնտի քաղաքակա- նութիւնը զեկալարութեւն է ընդհանուր խաղաղու- թեան սկզբունքներով և շահասէր նպատակների չէ ձգտում արեւելեան ճգնաժամում: Ռուսաստա- նը իր ոյժերը տալիս է միայն խաղաղութեան և կարգի մեծ սկզբունքների ծառայութեան»:

Ռուսաց գործակալութեան Կ. Պոլսից հեռա- գրում են. «Երեկ ժողովին ղեկավարների մի քանի հարիւր բանտարեւ, որոնք մի քանի շաբաթ ունեւի չէին ստացել, ցոյց արին ծովապետութեան առաջ և կամենում էին խզիղ-Ֆիօսկ գնալ: Ասկայն ունեւի մի մասը տալով, աջողկեց խաղաղացնել նրանց»:

Վերջին ժամանակներս հայոց հարցի մասին անգլիերէն լեզուով լայն տեսած աշխատութիւն- ների մէջ կան շատեր, որոնք նպատակ ունեն ծանօթացնել անգլիացի ընթերցողներին հայերի պատմութեան և էանագրաֆիայի հետ: Ամենա- լաւ աշխատութիւնը այդ կողմից համարվում է «Historical Sketch of Armenia» վերնագրով աշ- խատութիւնը, որ ստորագրված է «An old In- dian» պսեւդոնիմով:

«National Review» ամսագրում նորերս աղը- ված էր Տեյլի յօդուածը, որի մէջ, ի մէջի այ- լոց, առված է հետեւեալը. «Ազատամիտ կուսակ- ցութեան օգուտը կը լինէր հրաւիրել Ղազարոս- նին նորից գրաւելու լիզէրի տեղը. կուսակցու- թեան մեծամասնութեանը, այն ամենքին, որոնց փառասիրութիւնը դրանից չօշափված չէր լինի, —այդ փառքը գոհունակութիւն կը պատճառէր: Որ իրան՝ Ղազարոսին անախորժ չէր լինի վե- րադառնալ և ասանձնել լիզէրութիւն, կարելի է առանց զփուրթութեան հաւատալ. յերաւի, ոչին- չով չէ կարելի ապացոյցանել, որ նա երբ և իցէ կամեցել է հեռանալ: Ինչու ուրեմն հիմնա- լոր չը համարել այն լուրերը, թէ նա ղեկավար- րութիւն ունի վերադառնալ քաղաքական կեան- քին, թէկուզ այդ լուրերը չը բղխէին հեղինա- կաւոր աղբիւրից: Երբ մի կողմանի անձն զրա- ւոր կերպով էկապրէմէրի ուշադրութիւնը դարձրեց իրաւիչեալ յօդուածի վրա, Ղազարոս, «Daily News»-ի ասելով, հետեւեալ նամակով պատասխանեց. «Զեր հարցի պատասխանը ա- մենքին յայտնի փաստերի մէջ է գտնվում—իմ հասակում, իմ տեսողութեան և լսողութեան դրութեան և այն բանի մէջ, որ ես պարզամե- րի անդամ չեմ»:

Վ. Ա. Ի. Ե. Բ. Ա. Գ. Ի. Բ.

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը տղադրել է «Փոռնը» չարախոսութիւնի մէջ մի պաշտօնա- կան զօգուտներ, որի մէջ մի առ. մի թուում է Բարթողիմէոս Զմայիկանի կատարած գործերը օգոստոսի 15-ից սկսած: «Փոռնը» բոլորովին լուրջ և պարզերես ասում է այդ առիթով. «Կուղիքը որ ուշադրութեամբ կարդացվի, և բնաւ կարեւորութիւն չը տրուի չարախոսութեանց և բանասիրութեանց: Կատարում ենք «Փոռն- ջի» տեղեկանքը և մեր ընթերցողներին համար առաջ ենք բերում մի քանի կտորներ այդ պաշտօնական գրութիւնից:

1) Բարձրաշնորհ տեղապահ սրբազանը խոր- հրապկցութեամբ Մկրեան քահանայի և Նու- բեան, Չայեան, Գարակէօղեան և Գաբամանեան էֆէնդիներու՝ Բարձր, մեծ Եպարքոսին թաղրիւր մը մատուցած է 15 օգոստոսի 1896 թուակա- նաւ, որով առջի օրումս աղետալի դէպքին առ- թիւ ցաւ յայտնելով՝ աստ անդ եղեռներ գոր- ծող հայ խռովարարաց զէմ բողոք բարձած և խնդրած է որ ասոնց արարքը չը վերագրուի ընդհանրութեան, և ասոնք իրենց արժանի պատիժը կրելով հանդերձ՝ անմեղները պաշտ- պանութիւն, և կուսակալաց հեռագրով պատուէր տրուի՝ գաւառաց մէջ ապահովութեան հսկելու համար: Այս թաղրիւրը տաճկերէն թերթերու միջոցաւ հրատարակեց կառավարութիւնը, և միանգամայն այս մտքը հարկ եղած հրամանն հեռագրով ուղղեց կուսակալութեանց:

2) Բարձրաշնորհ սրբազան տեղապահ լսելով խաղաղի ժողովրդեան արկածն, Կայսերական

պալատ գացած և Վեհ. Սուլթանն հրամայած լինելով որ ժողովրդեան պահպանութեան հա- մար զօրք զրկուի ի խաղաղ, և միանգամայն եկեղեցի համախմբուած բազմութեան հաց և զրամ բաշխուի, այդ տնօրէնութիւնն օգոստոս 16-ին ծանուցուեցաւ խաղաղի Տ. Միսաք քա- հանային՝ ժողովրդեան իմաց տալու համար, որ- պէս զի սփոխուի, և միանգամայն յանձնարա- րուեցաւ որ արկածեալը վիճակին և պիտոյից վրա տեղեկագիր մը պատրաստեն և յաղարկեն առ սրբազան հայրը՝ զրաբեր ոստիկանին ձե- ումը: Նորին սրբազնութիւնն այդ գրով յու- ղարկեց իր կողմէ 5 լիրայի *) նպատակ մը բաշխուելու համար ամենէն իւրեք ընտանեաց, և միանգամայն իր հոգեւոր արդին Արիստա- կէս վարդապետը զրկեց միտիարելու համար ժողովուրդն:

3) խաղաղի արկածեալը համար Վեհ. Սուլ- թանն 1200 լիրայի նպատակ մը հնորած էր՝ 1000 լիրան յատկացուելով շնորհալ տուներու շինութեան, և 200 լիրան արկածեալը ուսուս- տին, և այդ գումարն Մալիէի զրամով՝ գրուած էր բարձրաշնորհ տեղապահ սրբազան հօր արա- մազորութեան ներքեւ Նորին սրբազնութիւնն օ- գոստոս 18-ին անձամբ խաղաղ երթելով՝ Կայ- սերական այն հնորհն արկածեալը աւետած, ինչ- ինչ կարգադրութիւնները բրած, Գանձաժողով մը կազմած և այդ ամէն կարգադրութիւններն անմիջապէս տեղեկագրած է ի Կայսերական պալատ հանդերձ հնորհապահ և բարեմաղ- թութեամբ: Յիշեալ Գանձաժողովը պաշտօնն է. 1. Պատրաստել արկածեալը ցուցակը և 200 լիրայի նպատակ բաշխել անոց. 2. ձգել շնոր- հալ չէնքերու և արկածեալը գոյց որքանու- թիւն և եղած շնորհ, և ցուցակը ներկայացնել իրեն. 3. Հետաժողով ըլլալ աւարտել գոյցերն ձեռք բերելու՝ ղեկավար տեղական իշխանու- թեան Այդ Գանձաժողովը կը գտնուի նորին սրբազնութեան ձեռնաստան Արիստակէս վար- դապետի նախագահութեան ներքեւ:

4) Արքաութեան գործոց նախարարն ծանու- ցաղով մը յանձնարարած էր տեղապահ սրբա- զանին՝ Պատրիարքի առաջնորդական տեղապահ Վահան վարդապետը հեռացնել անտի, յայտ- նելով որ անոր անդ ներկայութիւնը պատշաճ դատուած չէ տեղական կառավարութեան կողմէ: Ըլլան իրեն կարծիք պատասխանելով, օգոստոս 27-ին գրուեցաւ հոգաբարձութեան կարեւորն՝ վտովով այս մասին ընտելութիւն մը կատարելու և արդիւնքն յայտագրելու համար:

5) Ռատիկանութեան նախարարը ծանուցադիր մը ուղղելով տեղապահ սրբազան հօր, յանձնա- րարած էր պաշտօնեաց մը նշանակել ընկերակ- ցելու համար կառավարութեան միջոցաւ իրենց երկիրը զրկուելէր հայոց՝ մինչև Սամսունի և Տրապիզոնի նաւամատուցները: Սրբազան հայրը Բերայի թաղական խորհրդոյ գործակալար կա- րապետ աղան սահմանեց և ըստ այսմ պատաս- խանեց ծանուցաղին:

6) Խմացուելով որ կաթովի հայոց պատ- րիարքարանն իր ժողովրդէն իրեն ղեկավարելու մէջ մէկ թուղթ կուտայ, որպէս զի ազատ և ապահով մնան որ և է արկածն, և թէ՛ այս զործողութիւնը երկրի և արհաւիրք կը պատ- ճառէ ժողովրդեան, սրբազան հայրը օգոստոս 22 թուակալեալ թաղրիւր մը յղելով բարձրաշնորհ Մեծ Եպարքոսին, անոր ուշադրութիւնը հրաւի- րեց և խնդրեց որ արգելուի այս ձեռնարկու- թիւն, և անմիջապէս արգելուեցաւ:

7) Պալատի քարոզիչ Տաճատ վարդապետի գրութեան իմացուելով որ Սալմաթիոյ մէջ և արկածեալ կարօտեալներ և շնորհալ չէնքեր կան, հրահանգ արուեցաւ՝ օգոստոս 24-ին՝ յի- չեալ քարոզչին, կարօտեալներու և շնորհալ չէնքերու մէջ ցուցակը պատրաստել և յու- ղարկել:

8) Կառավարութեան կողմէ խաղաղի արկա- ծեալը արուած հային դադարեցուցած ըլլալ լսելով սրբազան հայրը նամակ մը գրեց Հոֆըդ Սապրի պէյին, որ մասնաւոր պաշտօն ունի ի խաղաղ, և խնդրեց այդ նպատակն քանի մը օր ևս չարտահայտելու:

9) Հաստատուած լինելով որ խաղաղի դէպ- քի միջոցին տեղոյն հրէայններն կողոպուտներ տարած են, տեղապահ սրբազանը զէր մը ուղ-

ղեց հրէից խաղաղապետի Կալմազապին և խընդ- րեց պատուիրել որոց որ անկ է՝ հրէից աւարի առած գոյքերը երևան հանելու գործին մէջ աշ- խատելու համար:

10) Ներքին գործոց վեհ. խորհրդականին նախագահութեան ներքեւ կարգեալ պետական Գանձաժողովը կողմէ երկու ծանուցաղեր ուղ- ղուած էին առ նորին սրբազնութիւն տեղապահ հայրն. առաջինը կը ծանուցուէր թէ Գանձա- ժողովն պէտք ունի Պոլսոյ և արուարձանաց հայ ուսուցչաց մէջ ցուցակին, յորում նշանակուած ըլլալ սր տեղացի ըլլալին և անձնական հան- դամանքին (շալ ու շան) և անոնցմէ որոնք յաչս պատրիարքարանի կասկածելի նկատուած ըլլալն. հետեւեալ կը յանձնարարուէր որ այդ պիտի ցուցակ մը պատրաստուելով զրկուի Գանձ- նաժողովին. իսկ երկրորդ ծանուցաղով կը պահանջուէր նոյնպէս որ տեղացի հայերէն ո- բնոր որ կասկածելի կը նկատուին, անոնց մէկ ցուցակն ձեռք բերուի թաղական խորհրդե- րէն և զրկուի Գանձաժողովին: Մյն կրկին ծա- նուցաղերու պատճեններն նոյնութեամբ հա- ղարկուելով մայրաքաղաքին քարոզչաց աւագե- րիցանց ու թաղական խորհրդոց՝ օգոստոս 24-ին յանձնարարուեցաւ կարեւորն այս մասին պար- տուպատշաճ անյապաղ ի գործ դնելու և՛ յայ- տագրելու համար ի պատրիարքարան:

11) Սրբազան հայրը 27 օգոստոս 1896 թուա- կանաւ երկրորդ անգամ թաղրիւր մը յղելով Մա- լիէ Նազըրիին և պատրիարքարանի զրամական խիստ անձկութիւնը նկարագրելով՝ պետութեան գանձէն պատրիարքարանի պահանջն եղած 1500 լիրային վճարումը խնդրեց, և այս խընդ- րանաց վրա 200 լիրայի թերահալի մը վճար- ւեցաւ պատրիարքարանի սնուկին:

12) Պաշտօնապէս լուր տրուած լինելով, որ Իսպէրի Գոյէնի հայ ուսանողաց մէջ իբր թէ կան այնպիսիք, որք իրենց վրա քաղաքական- րէն կասկած հրաւիրելու վարմանց մէջ կը գտնուին, օգոստոս 27-ին գրուեցաւ նոյն վար- ժարանի տնօրէնին՝ կրկնապատկել իր հսկողու- թիւնն հայ ուսանողաց վրա, զանոնք զերծ պա- հելու համար ամէն կասկած և փորձութենէ:

13) Պաշտօնապէս լուր տրուած լինելով որ իշխանութեանց ձեռքէն փախուտական անձնք՝ իբր թէ Ս. Փրկչեան հիւանդանոց մուտ գտած ըլլան իրեն կարծիք պատասխանելով, օգոստոս 27-ին գրուեցաւ հոգաբարձութեան կարեւորն՝ վտովով այս մասին ընտելութիւն մը կատարելու և արդիւնքն յայտագրելու համար:

14) Սրբազան հայրը օգոստոս 28 թուակա- նաւ երկրորդ անգամ թաղրիւր մը մատուցանելով Կայսերական պալատն՝ հնորակալութիւն յայտ- նեց այն ջանքերուն համար, որ տեղի ունեցան Կ. Պոլսոյ մէջ ապահովութիւնը վերահաստատե- լու համար: Սրբազան հայրը իր թաղրիւրին կցեց այս մասին աշխատող պաշտօնատարաց սմանց անուանց ցուցակը:

15) Պաշտօնապէս լուր տրուած լինելով որ կեդրոնական վարժարանի ուսանողաց մէջ ալ կան այնպիսիք, որք իբր թէ քաղաքականութեան իրենց վրա կասկած հրաւիրելու վարմանց մէջ կը գտնուին, այս մասին ևս կարեւոր յանձնա- րարուեցաւ կեդրոնական վարժարանի խնամա- կալութեան, որպէս զի պէտք եղածն ի գործ դնէ անյապաղ և յայտագրէ:

16) Խմացուելով որ Արապկերէն իրենց զա- ւակներով հանդերձ Պոլսի եկող 19 հայ կիներ, որք երկի մարդ չունին, կառավարութեան պաշ- տօնէից կողմէ արգելուի են ցամաք ելլել, աղ- ղարարուելով իրենց թէ պէտք է վերադառնան իրենց տեղերին, սրբազան հայրն թաղրիւր մը ուղղեց Բերայի Միթեմարեֆ պէյին և խնդրեց որ բարձուի այդ արգելքն, և եթէ անպատճառ պէտք է այդ կիներու վերադարձն, գնէ քանի մը օր միջոց արուի իրենց: Այդ խնդրին ըն- դուստեցաւ և ըստ այսմ թուղթութիւն եղաւ իրենց կանանց:

17) Բանտարկեալ աղգայնոց, որոց անունը արձանագրուած էր պատրիարքարանի մէջ, մէկ ցուցակը մատուցուեցաւ թաղրիւրով մը ոստի- կանութեան նախարարին, և խնդրուեցաւ փու- թացնել պաշտօնական գործողութիւնները և ար- ձակել: Այդ խնդրանց համաձայն բաւական թուով բանտարկեալ արձակուեցան:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բ Ե Ր Լ Ի Ն, 29 հոկտեմբերի

Ես գրել էի, որ օրիորդ Մ. Մէլիք-Նէղարեան կանանց միջազգային կոնգրէսի առաջին նիս- տում կարգաց մի զեկուցում հայ կանանց մա- սին: Ես ցանկանում էի աչքի անցկացնել բնա- գիրը աւելի մանրամասն հաշիւ տալու համար: Բայց զեկուցանողը շատ շուտ մեկնեց Բերլինից զէպի Կրէզդէն, ուստի կը հաղորդեմ նրա խօսա- ծի բովանդակութիւնը մերձաւորապէս:

Այն տեսակ «կանանց խնդիր», ինչպիսին գո- յութիւն ունի Եւրոպայում, չը կայ հայերի հա- մար, քանի որ մենք հայերս չունենք ոչ գործա- րանքների բանտարկներ, ոչ պոստի, երկաթու- ղու և այլ այդ տեսակ հիմնարկութիւնների մէջ ծառայողներ: Մեղանում ևս գոյութիւն ունի կանանց շարժումը և նա վերջին 25 տարվայ ընթացքում հետզհետեւ աճելով, շատ համակրելի ուղղութիւն է ստացել: Ամեն հայ ընտանիքում աշխատում են, որ իրանց աղջիկները ապագայ լաւ մայր և տանտիկին դառնան: Մեղանում շատ քիչ բացառութեամբ են կանայք մնում ընտա- նիքից դուրս, քանի որ տղամարդկանց թիւը շատ է կանանցից: Մինչև անգամ 13 տարեկան հասակից սկսած ամուսնանում են: Կանայք աշ- խատում են արդէն գիտակցական կերպով վե- րաբերվել մայր: Կոչված վեհ զերին:

Լաւ զարգացած մայր լինելու համար, ով կարող է՝ աշխատում է բարձրագոյն ուսում ստանալ: Միջակարգ դպրոցներում ուսում աւարտելուց յետոյ, մասնում են թէ Ռուսաստանի և թէ ար- տասանմանեան համալսարանները, որտեղ մե- ծամասնութիւնը սովորում է բժշկականութիւն և մանկավարժութիւն: Այս բոլորիս արտասա- մանում մենք ունենք 20-ից աւելի հայ ուսա- նողուհի և Մոսկվայում ու Պետերբուրգում շատ ազատ ունկնդիրներ: Իբրեւ լաւ տանտիկին, հայ կինը աչքի է ընկնում իր ընտանիքը օրինակելի մարդկութեան և բարօրութեան մէջ պահելով, իբրեւ լաւ ընկեր իր ամուսնուն՝ նա աշխատում է ընտանիքի հոգսերը թեթեւացնել իր ձեռքի աշխատանքներով: Գեղեցիկ, նախօրին լայնիշա- ները, զանազան մետաքսեղէն գործուածքները և այլ ձեռագործները, որոնց նա թէ իր ընտա- նիքումն է գործածում և թէ շատ անգամ վաճա- ուսանում է,—հայ կինը ձեռքի աշխատանքն են:

Հայ կինը սակայն չը սահմանափակվելով մի- այն այդ նեղ շրջանում՝ սկսել է այժմ փոր- ձեր անել ծառայելու հասարակութեանը և բըռ- նում է շատ պատառներ տեղի: Կրթված հայուհի- նին լաւ վարման է թէ հանրային դպրոցներ- րում և թէ իր մասնաւոր դպրոցում. նա ամե- նեկին յետ չէ մնում տղամարդից. նա անգամ է գանազան բարեգործական և հասարակական հիմ- նարկութիւնների և չէ խնայում իր ջանքերը՝ իր քրոյրերի և եղբայրների հաւատարիմ օգնա- կանը լինելու և նրա ցաւերը դարմանելու: Հա- յուհին, երբ լաւ պայմանների մէջ է գրված, ընդունակ է շատ շուտ առաջադիմելու և տղա- մարդու հետ հաւասար աշխատելու: Ինչ վերա- բերում է պարսկահայերին,—նրանք շատ վատ դրութեան մէջ են և այդ պատճառով էլ նրանք աւելի քիչ են առաջադիմելու: Բայց խօսենք ամենաթշուառներին—թիւրքաց հայերի մասին. սրանց մասին ես ոչինչ չունեմ տեսելու, քանի որ նրանց կանայք ամբողջապէս փոստիկ մէջ է չարտանայ: Եւ արդարեւ, ինչ առաջադիմու- թեան մասին կարող է մտածել մի կին, որը ամեն փամ ներկայ է լինում սարսափելի տեսա- րաններին. նա իր աչքի առաջ տեսնում է իր սիրելիներին, իր հօրն ու մօրը սպանված, վեր- բերով ծածկված, իր փոքրիկ զաւակին իր աչքի առաջ երկու կէս արած...:

Օրիորդը այնուհետեւ մասնաւորելով խօսքը, անցաւ իր անձնական տպագրութիւններին և պատմեց ժողովականներին, թէ ինչպէս իրան, իբրեւ բժշկուհու, մեծ հաւատով էին լիբերալե- րում թէ կանայք և թէ տղամարդիկ և հեռաւոր տեղերից գալիս էին բժշկվելու:

Օրիորդը խօսում էր գերմաներէն լեզուով և լաւ տպագրութիւն թողեց լսողները վրա: Թէև թիւջ էր արվում ժողովի իւրաքանչիւր անդամին իր մայրենի լեզուով խօսելու, բայց, ի հարկէ, հայերէն ամենին հաւկացող չէր լինի, քանի որ նոյն իսկ ֆրանսերէնն ու անգլերէնը մատ- չելի չէին բոլորին:

Հայուհի

*) Այժմեան կուլտուր 43 բուրձի

ՀԱՅԵՐԻ ՄԻ ՆՈՐ ԳԱՂՔԱՅԵՐ

Կիպրոս կղզին, որ 1878 թվականից գտնվում է Անգլիայի իշխանության տակ, դարձրել է իր վրա առանձին ուղարկություն, իբրև մի այնպիսի տեղ, ուր կարելի է բնակեցնել Փարս-Ասիայից փախչող և հեռացող հայերին: Անգլիայի իշխանությունը վստահ է, որ Կիպրոս կղզին գտնվում է փոքր-Ասիայի մոտ և ուրեմն հայերի տեղափոխվելը այնտեղ այնքան էլ կարող անյարմար համարվել զաղթողների համար:

Կիպրոս կղզու պայմաններին և հանգամանքներին լաւ ծանօթ մի անձն՝ Գրիստիան, որ երկար ժամանակ ապրել է կղզում իբրև մի ընկերությունից կառավարիչ, ասում է, որ Կիպրոս կղզում մի ժամանակ ապրում են եղել մինչև մի միլիոն հոգի. իսկ այժմ այնտեղ միայն 215,000 հոգի բնակիչ կայ: Կղզին յարմար է երկրագործության և մանաւանդ այգեգործության համար: Միայն այժմ է վերանորոգել ուղղման նախկին շինությունները, բնակ աղբիւրները, մաքրել առուները: Կղզու 4,000 քառակուսի մղոն տարածութիւնը բացի այն որ կը կերակրի մի մեծ աղբաբնակություն, կարող է արդիւնաբերել մերձակա նաւահանգիստների և Միջերկրական ծովի բազմաթիւ շոգենաւերի համար առատ աղալար: Միայն Պորթ-Սայդ նաւահանգիստը կարող է Կիպրոսի արդիւնքների մեծ մասի սպասողը լինել, քննելով զանազան մրգեր, տաւարի միս, թուչուն, ձուկ և այլն:

Կիպրոս կղզու աղբաբնակությունն երկու երրորդը քրիստոնեայ է, իսկ մի երրորդը մահմետական և վերջիններս իրանց շատ լաւ էին պահում զէպի քրիստոնեաները, միայն վերջին ժամանակները սկսել են փոքր ինչ խորթ զգալ և անախորժութիւններ ունենալ քրիստոնեաների հետ: Հայերի այցտեղ գաղթելը մեծապէս կը նպաստի կղզու բարեաւանդան և արդիւնագործական հարստութեան: Նրանք չեն խանդարի ընդի ժողովրդին, որովհետեւ հայերը պէտք է բնակվին այն տեղերում, ուր այժմ ամալայութիւն է արուս, իսկ հնում և ողբ են թէ արգաւանդ անդաւատներ և թէ ծառախոտ տարածութիւններ: Եւ այն ինչ որ թիւրքի չորացնող և մահացնող աղբեցութիւնը դարձրել է անապատ, նորից կը կենդանանայ և կը ծաղկի եւրոպական կանոնաւոր և բուսաւոր վարչութեան տակ:

ԿՐԵՏԻ ԴՈՒԹԻՒՆԸ

Հայոց հարցը վերջին ժամանակներս բոլորովին մոռացութեան մատնեց ուրիշ անցքեր Արեւելքում, որոնք զեռ նորերս յուզում էին Եւրոպայն և ի միջի այլոց, Կրետի վիճակը եւրոպական միջամտութիւնից յետոյ:

Կրետից արտասահմանաւն լրագրիւնների ստացած թղթակցութիւններից երևում է, որ կղզու վրա բնական կարգեր վերջնականապէս վերականգնելու համար հետեւեալ հարցն է ծագում. ինչպէս գտնել զամբարներ, որոնք անհրաժեշտ են ապստամբութեան ժամանակ վնասված աղբաբնակութեան վարձատրելու համար: Մահմետականները հանգամանակութիւն բաց արին յօգուտ իրանց՝ քաղաքները իրական ճաւաղակները, նրանց վերադարձը հնչողացնելու համար: Բայց քրիստոնեաների օգտին ստացվող նուիրատուութիւնները դադարեցին, իսկ փոխառութեան վերաբերեալ հարցը միայն սկզբունքով է վճռված, և մինչև նրա իրագործումը, ի հարկէ, շատ երկար ժամանակ կանցնի:

Ներկայումս վարչութիւնը ձեռնարկեց նախատարադատական աշխատանքներին միայն՝ ապստամբութեան ժամանակ աղբաբնակութեան կրած վնասների գումարը որոշելու համար: Այդ նպատակով կազմվեց մի յատուկ յանձնաժողով ամենից առաջ այն վնասների չափը որոշելու համար, որ կրել է աղբաբնակութիւնը՝ աների և շինութիւնների աւերումներից, և դրանց տրվել վարձատրութիւնը: Յանձնաժողովի քննութիւնից երևաց, ի միջի այլոց, որ այժմ մօտ 10,000 ընտանիքներ առանց ապաստանի և առանց որ և է միջոցների են մնացել: Նոր ժանդարմներն նոյնպէս աստիճանաբար և կազմակերպվում, որովհետեւ չը կայ դեռ ևս եւրոպական օֆիցերների անհրաժեշտ թիւը: Վարչութեանը զօրաւորութեան մէջ է գնում ի միջի այլոց և ֆինանսական միջոցների անորոշութիւնը, որովհետեւ

բիւրոյէտը պէտք է ըուէարկվի աղբային ժողովի կողմից, որը, նոր կազմակերպութեան պատճառով, պէտք է գումարվի ոչ վաղ փետրվար ամսից: Ժամանակաւոր բնաւորութիւն ունի Կրետի այժմեան դատաստանական նոր կազմակերպութիւնը եւս: Ժամանակաւորապէս, մինչև նոր դաշնագրի համաձայն դատաստանական կազմակերպութիւն մտցնելը, որը կը մշակվի եւրոպական դատարանների ձեռք, յանձնաժողով է կազմված՝ վճռելու համար այն հարցը, թէ Կրետիի ներկայ փոխութեան պայմաններում որքան յարմար է այժմ գաղթիւն ունեցող դատաստանական սիստեմը և ինչ փոփոխութիւններ պէտք է մտցնել նրա մէջ՝ նրան նոր դրութեանը յարմարեցնելու համար: Այդ բոլորը, ի հարկէ, այնպիսի երևոյթներ են, որոնք անխուսափելի են կղզու ներկայ անցողական դրութեան ժամանակ:

ՀԱՐԿՈՒՐԻ ԱՍՈՐ

«Մշակիչ» անցեալ համարում մենք առաջ բերինք արեւելեան հարցի մասին Հարկաւորի արտասանած ձառի համառօտ բովանդակութիւնը: Այժմ, անգլիական լրագրիւններից առնելով մայրաքաղաքի լրագրիւնները տպագրել են ամբողջ ձառի բնագիրը:

«Ներկայ դրութիւնը լաւ ըմբռնելու համար, անհրաժեշտ է դիմել Կրիմի պատերազմի ժամանակին: Այդ պատերազմի նպատակը և Պարիզի դաշնագրի հիմք ծառայող սկզբունքը կայանում էր թիւրքիայի ամբողջութիւնը և անկախութիւնը պահպանելու մէջ: Անգլիայի աւանդական քաղաքականութիւնը անհրաժեշտ էր համարում պաշտպանել Բ. Կուռը Ռուսաստանի դէմ, զոր մէջ տեսնելով քրիստոնեական կայսրութեան ապստամբութեան և գոյութեան էական պայմանը: Արդեօք այժմ էլ մեր երկիրը պաշտպանում է այդ քաղաքականութիւնը: Եթէ այո, այն ժամանակ յարցաւոր ամբողջ ազգուպիւր և ազգիտացիան անօգուտ են և նոյնպէս օչնչով չեն վերջանայ, ինչպէս 1876 թ.ին բողաքական սարսափների դէմ ծագած զայրոյթի բռնկումները: Վերոյիշեալ քաղաքականութեան ղեկավարող նպատակն էր օչնչացնել Ռուսաստանի աղբեցութիւնը թիւրքիայում, իսկ հետեանքը այժմ այն եղաւ, որ Ռուսաստանը ամենազոր է Բ. Կրան մօտ: Ժամանակ է ուրեմն նոր քաղաքականութիւն փորձել: 1856 թ.ին երթադրում էին, թէ Եւրոպայի հովանաւորութեան տակ կարելի է ուղղել թիւրքաց կառավարութիւնը, կամ նա ինքն կուղղվի: Այդ—դատարկ ցնորք է. նա կուղղվի միայն այն ժամանակ, երբ կը դադարի գոյութիւն ունենալուց: Անգլիան չէ կարող օգտակալ կերպով միայնակ հանդէս գալ: Յամենայն դէպս, այժմ ամենից խոստովանում են, որ եթէ Անգլիան թշնամական գործողութիւններ սկսի Ռուսաստանի դէմ, նրան երբէք չի աջողվի ստիպել ընթրման մտցնել Հայաստանում (ժափահարութիւններ), Ռուսաստանը—երկրին մօտ է գտնվում մեծ զորքով, իսկ անգլիացիները հեռու են: Միայն գինեւորական զբաւումը կարող էր մի փոքր նշանակութիւն ունենալ, բայց լորդ Սթրաբլիքի ասելով, բրիտանական նաւատորմը չէ կարող անցնել Տաւրոսի սարերը: Ենթադրական են նոյնպէս այն երկրպագները, թէ Ռուսաց աղբեցութեան դարգացումը փոքր-Ասիայում սպառնալիք է բրիտանական տիրապետութեանը: Զնչկաստանում: Ոչ մի բան, իմ կարծիքով, այնքան վնաս չէ բերել բրիտանական չահեմը, ինչպէս Ռուսաստանի ամեն մի գործողութեան մէջ Անգլիայի դէմ ուղղած մի քաջ տեսնելու ձգտումը դարձել է անանդութիւն, զրեթէ հայրենասիրութեան մի ապացոյց: Յիշենք անգլիացիների յուզմունքը, երբ Ռուսները չարժուում էին զէպի Մերվ: Ռուսները վաղուց Մերվումն են և դրանից ոչ մի չարիք չառաջացաւ: Այդ հիմնական մտաւորութիւնը մեր միջազգային քաղաքականութեան անաջողութեան պատճառն եղաւ վերջին 40 տարիների ընթացքում: Եթէ մենք երբ և իցէ հանենք այն նպատակին, որին ձգտում ենք, այդ կը լինի միայն նրանից, եթէ Արեւելքում Ռուսաստանի հետ միասին գործենք, և ոչ թէ նրա դէմ (ժափահարութիւններ): Լորդ Բիկմոնֆիլդ արդարացի կերպով ասեց մի ժամանակ. «Ասիան բաւական մեծ է Անգլիայի և Ռուսաստանի համար: Իմ կարծիքով, ամբողջ ինչորքը դրա մէջն է: Մենք խօսում ենք

այն մասին, որ անհրաժեշտ է կառավարութեան աջակցել այն քալի մէջ, որը նա յարմար կը համարի անել: Բայց արդեօք պատրաստ ենք պաշտպանել նրան այն քաղաքականութեան մէջ, որը միայն կարող է իրական օգուտ բերել—համաձայնութիւն Ռուսաստանի հետ արեւելեան հարցի վերաբերմամբ և ոչ իբրև թշնամու հետ Ասիայում, այլ իբրև դրացու հետ (ժափահարութիւններ): Առաջին քայլը այդ ուղղութեան մէջ կը լինէր Կիպրոսի դաշնագրի ջնջումը, որը հանդիսանում է մշտական սպառնալիք և թշնամութեան ցոյց Ռուսաստանի վերաբերմամբ թիւրքիայի օգտին (ժափահարութիւններ): Պաշտոնապէս դատաւարտելով այդ դժուրեցնումը, մենք ամբողջ աշխարհի առաջ կը հրաժարվէինք մեր մեղաւկեցութիւնից թիւրքական ուժադադուրութիւնների մէջ և նրանց վերաբերմամբ ունեցած անտարբերութիւնից: Դաշնագրի ջնջումը կը լինէր առաջին քայլը Ռուսաստանի հետ բարեկամական համաձայնութիւն կայացնելու: Մեղ հարկաւոր է ոչ թէ պաշտոնական դաշնակցութիւն, այլ խօսքի տէրիւնական մտքով.—մի դաշնակցութեան առաջին բաղնիք: Մեղ հարկաւոր է այն, ինչ ընդունված է Կոնստանտնուպոլսում օտար պետութիւնների հետ: Ոմանք այդ կը համարեն փոքրօքի քաղաքականութիւն, բայց «փառաւոր մեկուսացումը» արտադրում է միայն նուստեցողիչ անդուրութիւն: Մենք չենք կարող, եթէ մինչև անգամ ցանկանանք, զրկել Ռուսաստանին նրա բնական աղբեցութիւնից Սխայում: Մենք զրաջիներ ենք, և պէտք է մնանք ձգարիտ է, եթէ մենք ամեն մէկս մեր շրջանում աշխատակիցներ դառնանք Արեւելքի քաղաքականութեան գործում, փոխանակ մրցակիցներ լինելու, զբաղով մի նոր քաղաքականութիւն կը ստեղծվէ: Այդ քաղաքականութիւնը կազմաւորվի այն յանդիմանութիւնից, թէ նա չահարական ձգտումներից զրկված, մինչև այժմ նեցուկ է եղել մի պետութեան, որ հանդիսանում է նախատիք Եւրոպայի և պատուհաս Ասիայի համար:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինքիւնից հեռագրում են, որ իշխան Բիսմարկ տանջվում է անքնութիւնից:

—Կ. Պոլսից «Times» լրագրին հեռագրում են, որ անցեալ չաբաթ թիւրքաց զինուորները Կէզասդաշում ձեռնարկեցին ֆրանսիական պատուային զործակալին և աշխատում էին նամակները խլել նրա ձեռքից:

—Ինքիւնից հեռագրում են, «Մի քանի լրագրիւններ հաւատարմում են, որ իբր թէ Ռուսաստան վերադառնալիս Նոցա Մեծութիւնները կրկին կը հանդիպեն Վիէնայի կայսրին:

—Ջինսիւնից անցեալ միջիտարի նախկին արիւստան Դէֆիլէ-Բէյ, որը անցեալ տարվանից բանտարկված էր Եւրիտասարդ թիւրքիայի» կուսակցութեան պատկանելու մէջ կասկածվելով, փախաւ բանտից: Նրա փախուստին նպաստեց Եւրիտասարդ թիւրքիայի» կուսակցութեան կոմիտէն:

—Ալեքսանդրի 25-ին ժընելում վախճանվեց այդ քաղաքի համալսարանի նշանաւոր պրօֆէսորներից մէկը—Մորիս Դիֆ, որի անունը ծանօթ է ամբողջ գիտական աշխարհին իր անազնի աշխատութիւններով փորձառական ֆիզիօլոգիայի մասին: Նրա անունը գրաւում էր զէպի ժընելի համալսարանը բազմաթիւ ուսանողներ, աշխարհի զանազան կողմերից. 1894 թ.ին այդ ուսանողները ի պատիւ Դիֆի յիշատակայ ըմփական գործունէութեան ձեռնարկեցին նրա բոլոր աշխատութիւնների հրատարակութեան, որի երրորդ հատորը նորէն լոյս տեսաւ:

—Աթէնքից հեռագրում են, որ Կիպրոսում, Արիադը քաղաքում, ընդհարում տեղի ունեցաւ քրիստոնեաների և թուրքերի մէջ: Շատ մահմետականներ սպանված են և վիրաւորված:

—Բէյրութից գործակալութեան Լօնդոնից հեռագրում են սեպտեմբերի 29-ից. «Այսօր առաւօտեան, ժամաւացութեան ժամանակ, Կէնտըրբերի արքեպիսկոպոսը կաթողաւորաւ եղաւ: Նրան փոխարեակին եկեղեցական տունը, ուր իսկայն և եթ վախճանվեց:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խաւր իրէպիստոները անիծում են մեր դարի վերջը: Վերջին մօղայի մարդը, ճիշդ է, նոյնքան խորում է մարդասիրութիւնից, որքան թուրքը խաղի միջոց: Բայց դրա փոխարէն նրա մէջ զարգանում է սէրը զէպի կենդանիները: Պարիզում կազմվել է մի ընկերութիւն, որի նըպատակն է պաշտպանել... աֆրիկեան փղերին: Նա հաշու է, որ վերջին տարիների ընթացքում մարդը կտորել է 42,000 փղի: Եւ ի հարկէ, «Լուսափիւտ» եւրօպացուն էր մնում աղաղակ բարձրացնել այդ գաղանդութեան դէմ և աղաղակ խոչորագոյն չորքոտանիներին վերջնական կուրուստից: Գտնէ փղերը ստանալին ապրելու իրաւունք... Մի հարց էլ է ծագում: Արդեօք վերջին ժամանակները քաղաքակրթված աշխարհը չափ անզուսպ քնքշութիւններ տաճում զէպի կենդանիները: Չի լինի մի գիտական, որ ապացուցանէ թէ այդ քնքշութիւնը մի լաւ նշան է, որ այժմեան մարդուն զէպի իրան է ձգում տանեակ հաղաւորաւ դարեր առաջ ապրող նախադարձից:

«Daily News» լրագրի «Նիւ-Եօրկի թղթակիցը հաղորդում է, որ Ամերիկայի Միացեալ-Նահանգներ նախագահութեան երկու թեկնածուներ Մալ-Կինէյ և Բրիան պարտում են շատ քաղաքներ եւս եւս տեղ ձառն են արտասանում: Մալ-Կինէյ արդէն արտասանել է 91 ձառ, իսկ նրա հակառակորդը—226 ձառ:

Ինչպէս յայտնի է, գերմանական կայսր Վիլհելմ մի երկու տարի առաջ մի պատմական ալեքսանդրական նկար պատրաստեց «Եւրալոյթիւն» անունով: Այժմ նա հրամայել է հրատարակել փորագրութեամբ այդ պատկերը և ծախել քաղաքական ընկերութիւնների օգտին: Լաւ կը լինէր, որ այդ պատկերից մի օրինակ էլ կայսրը ուղարկէ իր բարեկամ սուլթանին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻԶ, 2 հոկտեմբերի: Հոկտեմբերի 1-ին Ֆոր ընդունեց Նիսիւն պալատում յուշակ թափաւորին: Տեսակցութիւնը տեղեկ էին ժամ: Նորին Մեծութեանը զինուորական պատիւներ տըրվեցին: Ֆոր թափաւորին փոխ-պաշտպանութիւն տուցի: ԲԵՐԼԻՆ, 1 հոկտեմբերի: Ստաստ սեկրետար Շիչկին և Ռուսաց ղեկավարութեան քարտուղար կոմս Պալէն հրաւիրված են այսօր նախաձեռնի կայսրի մօտ Նոր պալատում: Պատուամիջ վերադառնալուց յետոյ Շիչկին այցելութեան գնաց Զօհնդոյին և այցելեց ստաստ-սեկրետար Մարչալին:

ՍՈՖԻԱ, 1 հոկտեմբերի: Այսօր նահանգական դատարանում, երդուեալ դատաւորների մասնակցութեամբ, քննում էր Ստամբուլի սպանութեան գործը: Մեղադրվողներն են՝ Տիֆֆէյիւմ, Բօնի, Գէօրգիւմ և կառապան Ացօլ: Դաշինքը լցված է հասարակութեամբ: Օտար թղթակիցները տաս հոգի են, նրանցից 2-ը Ռուսներ են: Վկաներից մի քանիսի բացակայութեան պատճառով, արթուրօրը պահանջում է գործը յետաձգել մինչև նոյեմբեր: Մեղադրական ակտը հաստատում է, որ սպանութիւնը կատարել են Ստամբուլ, Յիլմանօլ, Բօնի և Գէօրգիւմ, կառապան Ացօլի գործակցութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 հոկտեմբերի: Հոկտեմբերի 2-ին Պետերբուրգի Ֆրադարձաւ Մեծ իշխան Պաւլէ Ալեքսանդրովիչ:

Չարջուից հաղորդում են, որ չոգենաւորին կանոնաւոր երթիկութիւն սկսվեց նորերս Ամու-Կարախով մինչև Պատիհիսարա՝ թուրքաստանի չրջանի զօրքերի հրամանատարի, գնեւեալ Գլուխովիկի էկսպէդիցիայի և բուխարական իշխանութիւնների ներկայութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 3 հոկտեմբերի: Հոկտեմբերի 2-ին կայսրը ունիպրոքութեան ընդօրոնեց այստեղ հասած գնեւեալ Գլուխովիկ-Խաչային, որը յանձնեց կայսրին սուլթանի ինքնագիր նամակը:

ՍԱՆՏՈՒԱՍՏԻԱՆ, 3 հոկտեմբերի: Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ իր ամուսնու հետ Բիարիցից ժամանեցին այստեղ և նախաձեռնեցին թաղուհու մօտ:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԳԱՆԹՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՊԵՍԱ ԱՐԾՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ երեք առանձին տետրակներով
Կար երաժիշտ
ՆԻԿՈԼԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՅԻ
2ՈՐՐՈՐԻ ԱԶԻՍՏՈՒԹԻՒՆԸ
ORIENTAL WEISSEN
(ԱՐԵՆԵԼԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ) վերնագրով
Օր. 4. գործը պարունակում է իր մէջ Կօթի հայկական պարեր և մի ժողովրդական երգ «Տօւն արի»։ Ամեն մի տետրակի գինն է 50 կօպ, և ծախվում է թիֆլիսում, Սուրբանաստեղծի, Լանկոյի և Ֆարինայի մագաղաններում։
(№ 106) 4—5

